

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/2

20 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Նազելինա Դանիելյանի ներկայացուցչի կողմից ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 26.05.2015 թ-ի թիվ 2574 որոշման դեմ բերված 24.07.2015 թ-ի գանգատի վերաբերյալ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 08.09.2015 թ-ի թիվ 35/5 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսելու և ըստ էության որոշում կայացնելու հարցը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Նազելինա Դանիելյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 01.02.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.274.004 դրամ, որից ԱԱՀ-ի գծով ապառք 500.100 դրամ, տույժ 273.804 դրամ, տուգանք 500.100 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 16.03.2012 թ-ին «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իրականացված ապրանքի մատակարարում համարվող գործարքից (անձնական օգտագործման ավտոմեքենայի օտարում): Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 26.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 2574 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Նազելինա Դանիելյանից 1.274.004 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 08.09.2015 թ-ի թիվ 35/5 որոշմամբ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ նիստի ժամանակ քաղաքացի Նազելինա Դանիելյանը հայտարարել է, որ իր կողմից օտարված ավտոմեքենաներից մի քանիսը ձեռք են բերվել ավտոսրահից: Հնչեցված տեղեկատվությունը ճշտելու, մասնավորապես՝ Նազելինա Դանիելյանի կողմից 16.03.2012 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով» օտարված խնդրո առարկա «Վազ 21154-120-22» մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերման եղանակը պարզելու համար հարցում է կատարվել ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն: 25.09.2015 թ-ին ստացված թիվ 17/3 12380 պատասխան գրությամբ տրամադրվել են քաղաքացի Նազելինա Դանիելյանի կողմից տարբեր ժամանակահատվածներում ձեռք բերված և օտարված շարժական գույքի (ավտոմեքենաների) վերաբերյալ տեղեկությունները: Վերջիններիս ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ վերոգրյալ «Վազ 21154-120-22» մակնիշի ավտոմեքենան Նազելինա Դանիելյանի կողմից 17.01.2012 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով» ձեռք է բերվել ոչ թե ավտոսրահից, այլ՝ քաղաքացի Արամ Թովմասյանից: Նշված ավտոմեքենան Նազելինա Դանիելյանի կողմից հաշիվ-ապրանքագրով ավտոսրահից ձեռք բերված լինելու դեպքում, Հանձնաժողովը քննության կառներ հաշիվ-ապրանքագրում արտացոլված ԱԱՀ-ի գումարի չափով Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունը նվազեցնելու հարցը: Սակայն, ելնելով վերոգրյալ հանգամանքներից գանձման առաջադրված պարտավորությունը նվազեցնելու հարցը չի կարող քննության առնվել:

Քննարկվող դեպքում Որոշմամբ ԱԱՀ-ի գծով առաջադրված պարտավորությունների գանձման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստական հանգամանքները:

Այսպես, քաղաքացի Նազելինա Դանիելյանի (վաճառող) և Գարիկ Ղամբարյանի (գնորդ) միջև 01.02.2012 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի

համաձայն Նազելինա Դանիելյանը Գարիկ Ղամբարյանին է վաճառել «Վազ 21723-114-01» մակնիշի 2008 թ-ի թողարկման ավտոմեքենա: Այնուհետև, Նազելինա Դանիելյանի (վաճառող) և Գարիկ Մարգարյանի (գնորդ) միջև 16.03.2012 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Նազելինա Դանիելյանը Գարիկ Մարգարյանին է վաճառել «Վազ 21154-120-22» մակնիշի 2009 թ-ի թողարկման ավտոմեքենա: Վերջինս Արամ Թովմասյանի և Նազելինա Դանիելյանի միջև 17.01.2012 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի» համաձայն Նազելինա Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանում է (ձեռք է բերվել) 17.01.2012 թ-ից:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Նազելինա Դանիելյանի կողմից 16.03.2012 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով» «Վազ 21154-120-22» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Նազելինա Դանիելյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշմամբ ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունները գանձման են առաջադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 08.09.2015 թ-ի թիվ 35/5 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 26.05.2015 թ-ի թիվ 2574 որոշմը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ